բազմաթիւ փիլիսոփայական ուղղութիւններ. կարեւորներն են.-

1. **Հեգէլականութիւնը** (Hegelianism), իր աջ ու ձախ թեւերով,
2. **Մարքսականութիւնը** (Մարքսիզմ – Marxism),
3. **Դրապաշտութիւնը** (Positivism), իր փորձապաշտ հակումով,
4. **Գոյութեան փիլիսոփայութիւնը** (գերմ.՝ Existenzphilosophie, ֆրնս. եւ անգլ.՝ Existentialism),
5. **Նոր-Կանտականութիւնը** (Neo-Kantianism),
6. **Կեանքի փիլիսոփայութիւնը** (գերմ.՝ Lebensphilosopie, անգլ.՝ Philosophy of life),
7. **Օգտապաշտութիւնը** (Utilitarianism),
8. **Գործնապաշտութիւնը** (Pragmatism),

... ինչպէս նաեւ 20-րդ դարուն յառաջացած.-

1. **Երեւութաբանութիւնը** (Phenomenology),
2. **Մարդաբանութիւնը** (Anthropology),
3. **Գիտութեան փիլիսոփայութիւնը** (Philosophy of Science),
4. **Քննադատական Տեսութիւնը** (Critical Theory),
5. **Մեկնագիտութիւնը** (Hermeneutics),
6. **Վերլուծական փիլիսոփայութիւնը** (Analytic Philosophy),
7. **Կառուցապաշտութիւնը** (Structionalism) եւ
8. **Յետ-կառուցապաշտութիւնը** (Post-Structionalism):

Ինչպէս յիշեցինք, բարոյագիտութեան պատմութիւնը անբաժան մէկ մասն է փիլիսոփայութեան ընդհանուր պատմութեան: Այժմ, որոշ մանրամասնութեամբ, պիտի ներկայացնեմ բարոյագիտութեան պատմութիւնը, վերոյիշեալ ժամանակաշրջաններու ամփոփ ուսումնասիրութեան ընթացքին: